Հաստատում եմ
Տնօրեն՝ Ա.Շեգունց

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Գորիսի թիվ 4 ավագ դպրոց
ուսումնական հաստատության անվանումը

12-րդ դասարան
դասարան

Լիլիթ բաբայան
դասղեկի ազգանունը, անունը,

« 2022- 2023 » ուսումնական տարի

ԱՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում 2022_2023 ուստարվա ընթացքում դասարանի հետ տարվող աշխատանքների նպատակն է բարձրացնելաշակերտների ռազմահայրենասիրական դաստիրակության աստիճանը, նպաստել նրանց մտավորկարողությունների, գիտելիքների, հմտությունների ձևավորմանը և զարգացմանը: Աշխատեն, որ լինեն ավելի համերաշխ ու ընկերասեր: ՈՒստարվա ընթացքում անցկացնել զրույցներ, էքսկուրսիաներ, հանրօգուտ աշխատանքներ: Անհատական աշխատանքների միջոցով նպաստել ուսման մեջ թերացող աշակերտների առաջադիմության բարձրացմանը: Անցկացնել դասալսումներ, ծնողական ժողովներ: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն) :

ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հոգևոր դաստիարակություն Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակահոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

Գեղագիտական դաստիարակություն

Աշակերտների մեջ ձևավորել գեղագիտություն և ճաշակ: Սովորեցնել նրանց գնահատել արվեստը: Այցելել պատկերասրահներ, մշակութային կոթողներ:

Ռազմահայրենասիրական դաստիարակություն -Հայրենասիրության կրթության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ : Նշել մի շարք ֆիդայիների և հերոսների անուներ և թվարկել այն բնավորության գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը նռազմարվեստի ձևերը:

Ֆիզիկական դաստիարակություն-Դասապրոցեսին պետք է ցուցաբերել ակտիվություն :Բացատրել և պահանջել , որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը:

Աշխատանքային դաստիարակություն- Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը , որկարողանան գոյատևել ներկայիս դժվար պայմաններում:

Բնապահպանական դաստիարակություն - Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպիբնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ , որոնք առկա են իրենց շրջապատում :

Դպրոց-ընտանիք կապը- Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն , որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց - ընտանիք կապը, որպեսզի աշակերտները ավելի լավ սովորեն:

Դասղեկի աշխատանքի փուլային նկարագրություն

Ամենօրյա աշխատանք

1.Հետևել կարգապահությանը
2.Հետևել հերթապահությանը դասարանում:

Ամենշաբաթյա աշխատանք

1.Անցկացնել դասղեկական ժամեր
2. Կատարել այլ պլանավորված Աշխատանքներ

Ամենամսյա աշխատանքներ

1.Նախապատրաստել և կազմակերպել աշակերտների մասնակցությունը դպրոցական գործընթացներին
2.Վերահսկել դասարանի աշակերտների մասնակցությունը խմբակներում
3.Օգտվել հոգեբանական ախտորոշիչ թեստերից, հարցաշարերից, ախտորոշման այլ միջոցներից, դրանք նրբանկատորեն կիրառել դաստիարակչական աշխատանքում:

Դասարանում դասավանդող ուսուցիչների հետ տարվող աշխատանքներ

Աշխատանքի թեմա	Ուսուցչի դասավանդող առարկա	Ամսաթիվը
Մասնագիտական գործունեության համատեղ քննարկումներ	Երկրաչափությու ն Հանրահաշիվ	I-ին կիսամյակ
Աշակերտների վարքի և առաջադիմության մասին տեղեկատվության Փոխանակում	Անգլերեն Կենսաբանություն	I-II կիսամյակ
Շնորհալի աշակերտների բացահայտում	Ռ.լեզու Օ.լեզու	
Աշակերտների մասնակցությունը «ֆիզկուլտուրա» առարկայի դասաժամերին Հիգենայի կանոնների Պահպանում	Ֆիզկուլտուրա	Տարվա ընթացքում

Դասարանի ավագի և դասարանական խորհրդի անդամների հետ տարվող զրույցներ և աշխատանքներ

N	Թեմա	Ամսաթիվը
1	Էլեկտրոնային դասամատյանի նայելու ձևը	18. 09
2	Ինչպես կատարել աշակերտների բացակայությունների ամենօրյա հաշվառում	17. 09
3	Դասարանական խորհուրդ	18. 09
4	Դասարանում առկա խնդիրներ	Պարբերաբար
5	Հիգենայի կանոնների պահպանումը դասարանում	Պարբերաբար
6	Աշակերտ-ուսուցիչ փոխհարաբերություններ	Պարբերաբար
7	Աշակերտների պատրաստվածությունը դասերին	Պարբերաբար
8	Կարգապահություն և օրինակելի վարք	Պարբերաբար
9	Միջոցառումների կազմակերպում	Պարբերաբար

Ծնողական ժողովներ

N	Թեմա	Նպատակը	Ժամկետը
1	Կազմակերպչական հարցեր	Դպրոց-ընտանիք կապի ամրապնդում: Ծնողը երեխայի առաջին և ամենակարևոր ուսուցիչն է: Ոչ մի հակասություն չի կարող լինել դպրոցի և ընտանիքի միջև, եթե ծնողներն ու դպրոցը հաջողությամբ համագործակցում են:	Սեպտեմբեր
2	Ա. Կրթության դերն ու նշանակությունը: Բ. Առաջադիմության հետ կապված հարցերի քննարկում:	Ծնողները գիտակցեն՝ հասարակության մտավոր ներուժն այն գրավականն է, որն ապահովում է ինչպես պետության հզորությունը, այնպես էլ յուրաքանչյուր քաղաքացու և ընտանիքի բարեկեցությունը:	Դեկտեմբեր
3	Համակարգչի դերը երեխաների կյանքում	Օգնություն ծնողներին	Մարտ
4	2022-2023 ուսումնական տարվա ամփոփում: Նոր խնդիրների և դրանց լուծման ուղիների առաջադրում:	Դպրոց-ընտանիք կապի ամրապնդում	Մայիս

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՈՒսումնական	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը
1	Գիտելիքի օր
2	Կրթության դերը կյանքում
3	Ինչ է ազատությունը
4	Կյանքը և ժամանակը
5	Կյանքի մնայուն արժեքները
6	Ուսուցիչը լավագույն տարիներիդ ուղեկից
7	Ինչպես հասնել հաջողության
8	Պատասխանատվություն
9	Ինչ է կարծրատիպը
10	Գենդերային անհավասարություն և գլոբալացումը որպես մարդկանցթրաֆիքինգի պատճառ
11	Ինչ-որ տեղ ինչ-որ բան սխալ է
12	Անտարբերությունը չարիք է ծնում
13	Արտակարգ իրավիճակը հաղթահարելու պատրաստվածություն
14	Եկեք զրուցենք
15	
16	Նրա մասին,ով իմ կողքին է
17	Ամանորյա սպասումներ
18	Կամային հատկանիշներ
19	Հաղթում է նա,ով չի նահանջում
20	Կյանքի շրջապտույտը
21	Պատմության դասերը ապագայի ուղենիշ
22	Անհատի և հասարակության շահերի համակցումը
23	Ես բացահայտում եմ աշխարհը
24	Թրաֆիքինգ(գործնական խորհուրդներ)
25	Մարդ,որին կուզեի նմանվել
26	Մայրը սիրո և հարգանքի է արժանի
27	Վատ սովորությունները տանում են անհատի կործանման
28	Զգացմունքի և բանականության համակցում
29	Երբ փշրվում են երազանքները,համառորեն շարունակիր երազել
30	Հաղթանակը պարտադրում է զգոնություն և տոկունություն
31	Ազգային զարթոնք
32	Յուրաքանչյուր վերջ մի նոր բանի սկիզբ է
33	Մտորումներ նոր կյանքի սեմին
34	Ուր են տանում ճանապարհները
35	Վերջին դասը հարազատ կրթօջախում

Դասղեկի աշխատանքի բնույթը, մանկավարժական գործառույթները, նպատակը և աշխատանքի ուղղությունները

Դասղեկները դասարանի հետ հիմնական աշխատանք վարողներն են: Գործունեության շրջանակը ենթադրում է հետևյալ աշխատանքները.

1. Դասարանում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպում՝
   - հետևում է աշակերտների հաճախելիությանը (մատյանում նշում է բացակայությունները, հետևում է, որ դրանց համար փաստաթուղթ ներկայացվի),
   - աշխատում է առարկայական ուսուցիչների հետ՝ առաջադիմության բարձրացման ուղղությամբ (պարբերաբար ստուգում է օրագրերը, վերլուծում է ընթացիկ և վերջնական գնահատականները)
   - հետևում է աշակերտների կարգապահությանը:
2. Աշակերտների հետ արտադասարանական դաստիարակչական աշխատանքի կազմակերպում՝
   - կազմակերպում է դասարանական ժողովներ,
   - կազամկերպում է կոլեկտիվ ստեղծագործական աշխատանքներ,
   - կազմակերպում է այցելություններ թատրոն, համերգասրահ, թանգարաններ, ցուցահանդեսներ:
3. Սովորողների հանրօգուտ աշխատանքի (դպրոցամերձ տարածքի մաքրում և այլն) կազմակերպում:
4. Աշխատանք սովորողների ծնողների հետ՝
   - ծնողներից ակնկալում է, որ հետևեն երեխայի առաջադիմությանը,
   - ծնողների հետ անհատական զրույցներ է ունենում,
   - ծնողական ժողովներ է կազմակերպում:
5. Ծանոթացում սովորողների սոցիալական պայմաններին՝

- ծանոթանում է սովորողների ընտանիքի կազմին,
- նրանց բնակարանային և կենցաղային պայմաններին:
- բարոյահոգեբանական պայմաններին

6. Դասարանի աշակերտների սննդի կազմակերպում (նյութական օգնության կազմակերպում):
7. Թղթավարություն՝
   a. ամփոփում է աշակերտների առաջադիմության տվյալները,
   b. լրացնում է դասամատյանը,
   c. լրացնում է անձնական գործերը,
   d. մշակում է դասղեկի աշխատանքային պլան:
8. Աշխատանք մանկավարժահոգեբանական կարողությունների խորացման ուղղությամբ:

Դասղեկական ժամի դաստիարակչական գործառույթները

Դասղեկական ժամը աշակերտների հետ դաստիարակչական աշխատանքի կազմակերպման կարևորագույն ձևերից մեկն է: Այն ներառվում է դասացուցակի մեջ և անց է կացվում յուրաքանչյուր շաբաթ՝ որոշակի օր:

Դասղեկական ժամի ձևերը տարբեր են. դասախոսություն, զրույց, բանավեճ, վիկտորինա, մրցույթ, խաղ, կոնֆերենս, հեռակա ճանապարհորդություն, տոն և այլն:

Դասղեկական ժամը կատարում է հետևյալ դաստիարակչական ֆունկցիաները. կրթական, կողմնորոշման, ուղղորդման և ձևավորման:

Կրթական ֆունկցիա - կարևորվում է նրանով, որ դասղեկի ժամը ընդլայնում է աշակերտների գիտելիքների շրջանակը: Դասղեկական ժամի առարկա կարող է հանդիսանալ գիտությունների տարբեր ոլորտներից բերված տեղեկություններ, սոցիալական կյանքի երևույթներ, երեխաների հոգեբանական խնդիրներ:

Կողմնորոշող ֆունկցիա - նպաստում է իրադարձություններին և երևույթներին բարոյական գնահատական տալու ժամանակ՝ հենվելով բարոյական և հոգևոր արժեքների վրա, աշակերտների մոտ աշխարհի հանդեպ որոշակի վերաբերմունքի ձևավորմանը: Հաճախ դասղեկական ժամերը օգնում են աշակերտներին կողմնորոշվել հասարակական արժեքների մեջ:

Ուղղորդող ֆունկցիա - դասղեկի ժամի այս ֆունկցիան նախատեսում է աշակերտների գործունեության կազմակերպում, ազդելով նրանց վարքագծի վրա, որպեսզի գիտելիքները վերածվեն համոզմունքի:

Ձևավորող ֆունկցիա - արտահայտվում է աշակերտների մոտ իրենց արարքների և իրենք իրենց գնահատելու կարողության ձևավորման մեջ, օգնում է վարել երկխոսություն, շարադրել փաստերով, արտահայտել սեփական կարծիքը:

Հաճախ դասղեկի ժամը միաժամանակ կատարում է նշված բոլոր չորս ֆունկցիաները. այն և' կրթում, և' կողմնորոշում, և' ուղղորդում, և' ձևավորում է աշակերտներին: Այս ֆունկցիաները, հնարավորինս պետք է արտացոլվեն դաստիարակչական միջոցառման նպատակի ձևակերպման մեջ:

Դասղեկի ժամերի թեմատիկան տարբեր է: Դասղեկի ժամերը կարող են նվիրվել.

- բարոյաէթիկական
- գիտության և իմացության
- գեղագիտական
- պետության և իրավունքի
- հիգենայի և առողջ ապրելակերպի
- հոգեբանական
- բնապահպանական
- համադպրոցական /կարևոր հասարակական իրադարձությունների, տոնական օրերի/ խնդիրների:

Դասղեկի խնդիրը – ստեղծել մանկավարժական տարածք երեխայի ինքնության զարգացման, նրա ներաշխարհի հարստացման համար:

Լավ է, երբ երեխաների հետ շփվելիս դաստիարակը կառաջնորդվի յուրահատուկ կանոնակարգով, որը իր մեջ ներառում է այսպիսի կանոններ.

- Սիրել երեխաներին
- Երբեք չմոռանալ խրախուսել երեխաներին լավ արարքի համար
- Երբեք չհամեմատել երեխաներին
- Չունենալ սիրելիներ
- Երբեք չբողոքել երեխաներից
- Կարողանալ ներել
- Կարողանալ օգնել
- Կարողանալ համբերել և սպասել
- Կարողանալ հետաքրքիր մարդ լինել

- Կարողանալ սիրով պահանջել և սիրել պահանջելով
- Կարողանալ յուրաքանչյուրի համար բարի խոսքեր գտնել
- Կարողանալ ընդհանուր լեզու գտնել ուսուցիչների և ծնողների հետ
- Կարողանալ ցանկացած աշխատանք կատարել երեխաների հետ
- Յուրաքանչյուր երեխայի մոտ գտնել կարևոր որակներ և ջանալ զարգացնելդրանք
- Ամեն ինչ հորինել նրանց հետ միասին, այլ ոչ թե նրանց փոխարեն
- Սովորեցնել երեխաներին բարություն, պատասխանատվություն, հարգանքիրենց և մյուսների նկատմամբ:

Դասղեկությունը բավականին աշխատատար, բարդ գործ է: Միշտ պետք է զբաղվել երեխաների հետ, միշտ նոր սնունդ տալ նրանց ուղեղին, պատկերացմանը, հոգուն, արդյունքը երկար սպասել չի տա:

Հաշվի առնելով և՝ ժամանակակից դպրոցի սաների հետ աշխատելու դժվարությունները, և՝ տարիքային շրջանի հետ կապված դժվարությունները, և՝ դասարանի անհատական առանձնահատկությունները, որպես դասղեկ,նախընտրում եմ ,,Դասղեկի ժամ ,, դասաժամերը կոչել բարոյագիտության և կյանքի դասաժամեր:
Այդ դասաժամերի զրույցի և բանավեճերի թեմաներն ընտրելիս օգտվել եմ առակների տարբեր գրքերից, մանկավարժական ամսագրերից և այլ բարոյախրատական ստեղծագործություններից: Ավելացնեմ նաև, որ ներքևում նշված թեմաների ցուցակը միանգամայն փոփոխական է, քանի որ նպատակս է ուսումնասիրել երեխաների վարք ու բարքը և նկատված թերացումները վերացնել ու բացառել: Ընթացքում դասարանի վարքագիծը, ուսումնական առաջադիմության մակարդակը, կամ որպես աշակերտ նրանց պահվածքը կարող են նոր նպատակներ ծնել և թելադրել նոր ոճով ու թեմատիկայով աշխատանք: Իսկ այդպիսի փոփոխություններն ու նորարարությունները կարտացոլվեն դասղեկի իմ օրվա պլանում:

Դասի համարը	Դասի թեման
1.	Նախորդ ուստարվա արդյունքների վերլուծում, նոր ուստարվա անելիքների ծրագրում, առաջարկությունների արկղիկի պատրաստում:
2.	Զրույց դպրոցականների պարտականությունների և իրավունքների մասին:
3.	Պահվածքը դպրոցում, դասարանում, դահլիճում և հասարակական այլ վայրերում՝ համաճարակի այս օրերին:
4.	Իմ հայրենիքը իմ տունն է:
5.	Խնամքով օգտագործել դասագրքերը:
6.	Զրույց՝ <<Մարդիկ, որոնց կուզեի ես նմանվել>>:
7.	Զրույց՝ <<Երկրագունդը բոլորիս տունն է>> թեմայով:
8.	<<Աշնանային պարահանդես>> թեմայով զրույց:
9.	Ովքեր են իմ ընկերները:

10.	Ինչն եմ կարևորում ընկերության մեջ:
11.	Զրույց՝ <<Իմ կատարած բարի գործը>>:
12.	Մեր վատ սովորությունները և պայքարը դրանց դեմ:
13.	<<Համակարգիչն ընկեր է, թե՝ թշնամի>>:
14.	<<Մենք առողջ ապրելակերպի կողմնակիցներ ենք>>:
15.	<<Ուրախ դիմավորենք Ամանորը>>:
16.	<<Բոլորս տարբեր ենք, և դա մեր հպարտությունն է>>:
17.	<<Մեր ընտանիքը>>:
18.	<<Պահպանենք բնությունը - պահպանենք կյանքը>>:
19.	<<Իրավունք և պարտականություններ>>:
20.	<<Սուտը դատապարտում եմ>>:
21.	<<Օգնիր ընկերոջդ մեծահոգաբար>>:
22.	<<Լավ է հարուստ լինել, թե՞ հոգեպես հարուստ, ինչու՞>>:
23.	<<Մեր կյանքը իմաստավորող բարոյախոսական արժեքները>>:
24.	<<Գիրքը իմ բարեկամն է>>:
25.	<<Ճանապարհորդության գարնանային առաջին ելևէջների ներքո>>:
26.	Սիրելի գրքի էջերով:
27.	«Իմ մայրիկը»:
28.	«Առողջ մարմնում՝ առողջ հոգի»:
29.	«Մայրիկի օրը մեր ընտանիքում»:
30.	«Եթե ես ունենայի միլիոն հատ վարդեր, ու՞մ կնվիրեի»: Հույսի ամիս
31.	Հաղթանակների ամիս՝ մայիս ... :
32.	Ո՞րն է իսկական գեղեցկության գաղտնիքը
33.	«Ի՞նչ խորհրդանիշներ ունենք, ինչու՞ ենք անկախ պետություն»:
34.	Վերլուծե՛լ տարին և ամփոփե՛լ 5-րդ դասարանի դպրոցական տարին:

Նախատեսում եմ նաև «Բաց դաս/եր/», որի/որոնց/ ընթացքում թեմայի ընտրությունը կկատարեն երեխաները՝ ընտրելով իրենց ավելի հոգեհարազատ թեման:

Դպրոցը կորոնավիրուսի համավարակի ժամանակ հավասարապես դժվար է թե՛ ծնողների, թե՛ երեխաների համար: Բոլոր գործողությունները պետք է իրականացնել խստորեն հետևելով կանոններին:

- ✓ անհրաժեշտ է կրել դիմակ
- ✓ պարբերաբար ախտահանել/լվանալ ձեռքերը
- ✓ պահպանել սոցիալական հեռավորություն